



ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՍՈՂՈՄՈԽ ՄՐԿ. ՍՈՂՈՄՈԽՆՅԱՆ

(Կոմիտաս)

ՇՆՈՐՀԱԼԻՆ

ՆՈՐԱ ԴԱՐԸ ԵՎ ՆՈՐԱ ԺԱՄԱՆԱԿ ՀՈՒԶՎԱԾ ԿՐՈՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

(Աղբյուրք՝ Ընդհանրական, Շնորհալի եւ պարագայի իւր)

Ա. Ա.

ԺԱ. ԴԱՐԻ ՎԵՐՁԵՐԻ ԵՎ ԺԲ-Ի ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ. ՀԱՅՈՑ ՔԱՂԱՔԱ-
ԿԱՆ. ԱԶԳԱՅԻՆ ԵՎ ԿՐՈՆԱԿԱՆ ՎԻՃԱԿԻԸ



րդեն Ներսիս Շնորհալուց երկու
դար առաջ և նույնիսկ նորա ժա-
մանակ Հայաստանում բավական
թվով տեղացի և օտար թա-
գավորություններ կային: Սորա թեպետ ա-
մենքն էլ գործում էին Հօգուստ յուրյանց
ժողովրդի բարելավության, ամենքն էլ շանք
էին թափում քաղաքականապես ընդարձակ-
վել և օտարի բռնությունը թոթափել, զար-
դարում ու շենացնում էին քաղաքները հոյա-
կապ ու շքեղ շենքերով ու եկեղեցիներով,
բայց գրեթե բոլորն էլ զատ զատ, մեկը
մյուսից անկախ, մինչև իսկ ոխերիմ թշնա-
մի, միմյանցից երկներ ու հոյեր խելով
էին ճգուտ աշխարհագրական սահմաններն
ընդարձակել, առանց աշքի առաջ ունենալու
այն, որ Արշակունյաց թագավորության ան-

կումից հետո երկար ժամանակ Հայաստանը,
ժողովուրդը, իշխանական տոհմերն ինչպիսի՝
Հարվածների տակ հեծում ու մաշվում էին,
ինչպիսի՝ արյուն ու քրտինք թափելուց հե-
տո է, որ նախ պարսից Սասանյան բռնա-
կալության, հետո արաբացիների ամիրա
իշխանների անգիտվյան և գագանաբարո
թյուրք զորագրների ճիրաններից պրծած
շոնչ էին քաշով, զեր նոր Հայաստանի ան-
կյուններում մոխիրի տակ թաղված կայծերը
ցատկում, ավերակների միջից թագավորա-
կան թափն ու թուրք, գաճն ու գավազանը
բարձրանում և հիմք էին զնում թագրատուն-
յաց, Արծրունյաց, Սյունյաց, Աղվանից, Վա-
նանդի, Զորագետի, Գուգարաց, Ուտյաց,
Ռշտոնյաց, Անձևացյաց թագավորություն-
ներն ու Խաչենի, Խլաթի, Մանազկերտի, Տա-
րոնի և Սասունի իշխանությունները:

Այսքան մանր թագավորական և իշխանա-
կան տրոհումները հետզտեհեն հառաջ եկան:
Նախ թագրատումիք, որ հազիվ էին հաս-
տատվել Արարատյան երկրում (885), մյուս
իշխանական տոհմերն էլ, ազատ զգալով,
իրենց արքյալական թագի ետևիցն ընկան:
Արծրունիք առաջինն եղան, որ ժ դարու
սկզբին (908) անկախ տերություն հիմնեցին.
առրանից ուղիղ 60 տարի հետո, նույնիսկ

1. Սողոմոն Սողոմոնյանի (Կոմիտաս) ներկա աշ-
խատությունը — 1893 թվի ապրիլի 25-ին Ս. Էջմիածնի
Գեղրդյան ճեմարանին ներկայացրած ավարտական
շարադրությունն է, որը Հայտնաբերվել է Հայկ,
ՍՍԾ. Գետ. Մատենադարանում և հրատարակվում է
առաջին անգամ: — ԽՄԲ.

Բագրատոնյաց տունը երկպառակեցավ և Վանանդ գավառում առանձին թագավորություն ձևացավ (968) Կարս մայրաքաղաքով, այսպես էլ Արծրունիք բաժանեցան Ռշտոնյաց և Անձեղացյաց թագավորությանց, այսպես հետզհետեւ կազմվեցան Սյունյաց (970), Կյուփիկյան Բագրատոնյաց (988) թագավորությունը կոռում և ապա մյուս մանր մոնր իշխանություններն ու թագավորությունները կազմակերպվեցան:

Այս բազմազանությունը Հայաստանին չէր լինասի, եթե դոցանից յուրաքանչյուրը ներքին կառավարությունը պահելով, ընդհանուր ինդիրներում՝ ինչպես օրինակ՝ Հայրենիքի պաշտպանությունը, հզորագույնի՝ Բագրատոնյաց գերիշխանությունը ճանաչելը, մի լինեին: Բայց Հակառակ ուղղությամբ են գործում, որով թագի և գահի կործանման առիթ վիճելով, դեռ նորակառուց թագավորական իշխանությանց հիմք չամրացած, մեկը մյուսի հետմից կորուստի անդունդ են գործում և քայլայվում: Հայաստանը հունաց ձեռքն է ընկնում Բագրատոնյաց անկումից հետո, շուտով սոքա տեղի են տալի Պարսկաստանի սելջուկների արշավանքին, որոնք Տուրքիլի և Ալիքամլանի առաջնորդությամբ վայրենի հերոսախմբեր կազմած՝ երկիրը տակն ու վրա են անում: Հուները, որ երկրի տերին էին, չկարողանալով դեմ դնել սելջուկներին, քաշվում են և ձեռք վերցնում երկրի պաշտպանությունից: Բայց կարողացան մի քանի քաղաքներ պաշտպանել ու պահել, այն էլ Ալիքամլանի որդին՝ Մելիքշահը գրավեց: Այսպիսով բովանդակ երկիրը տիրում են առան գժվարության սելջուկները (1086—1092): Խսկ մյուս մանր իշխանություններն ու թագավորությունները, որոնք գոյություն ունեին, խսպառ ջնջվեցան թաթարների ժամանակ:

Բագրատոնյաց թագավորության մարերուց հետո, հայերն իրենց բախտն սկսեցին որոնել Հայրենիքից դուկա, օտար երկնքի տակ: Գաղթականության շավիդն է բացվում այնուհետև հայերի համար, որոնք նեղվեցան մերթ հույն, մերթ թրուքը բռնակալ կառավարությունից: Գաղթում են մեծ մասով Կիլիկիա: Այս երկիրը հայերին վաղ ժամանակներից ծանոթ էր վաճառականական ճանապարհի վերա գտնվելու համար, ուստի այստեղ կամաց կամաց ամրացնելու ետկցն են ոնկնում յուրաքանչյուր Հայրենիքը, այսպիսով հիմնում են Ռուփինյանց Հարստությունը, որ մոտ երեք դար տևեց (1080—1375):

Հայ գաղթականները ժառանգում են Կիլիկիան, բայց երկար ժամանակ մաքառելով

հույների, իկոնիայի և եղիպտոսի սուլթանների դեմ և շատ կոտորածով:

Ազգային գաղթականության հետ ի միասին, Հայրապետական Աթոռն էլ փոխադրվեցավ Կիլիկիա, որովհետև կաթողիկոսները քաղաքական իշխանությունից անբաժան և նորահետ էին գործում: Այստեղ ինչքան Ռուփինյանց իշխանությունը զորացավ, այնքան էլ Աթոռն ազատ հաստատվեցավ: Թեպետ մի կողմից իշխանական Աթոռին կից, բայց սույա լատինների հետ ոնեցած ինմամության և նույնիսկ նոցանից ակնածության պատճառով, պապական ազգեցությանը ենթարկվեցավ: Հույներն էլ հայոց նոր թշնամի համարելով, որ մի պատվար էին նոցա աշխարհական ճանապարհի առաջ, մեծ եռանգույթ թե՛ պապերը, թե՛ հույները կամենում են ձուկեւ, յուրաքանց եկեղեցուն միացնել: Երկում էլ Եկեղեցու միության պատրովակով ծածկում են յուրաքանց նպատակները: Այս երկու կրոնական պահանջների ժամանակի, Ասորիքի հայոց մեջ էլ շփոթություն է ընկնում: Փանազան հին հերձվածներն ու մողորությունները կրկին (են) բռնում և վիճաբանության առիթ լինում ոչ միայն հայոց և ասորոց մեջ, այլ նույնիսկ հայոց մեջ: Ժամանակի հայրապետները Գրիգոր Գ. և ներսես Շնորհալի Պահապանիները, մեծ եռանգույթ այս բոլորի դեմ կանգնում և առաջն են առնում: Ասորիքի խոռվությունները համարտում են ներսես Շնորհալու գրած թրղթով, հոնաց և պապերի պահանջների համար էլ ժողով են գումարում: պաշտպանում են Հայաստանյաց Սուրբ Եկեղեցու ուղղափառությունը, հերքում նոցա անհիմն կարծիքները, շեն ընկճվում ո՛չ մեկին և ո՛չ մյուսին: այս դեպքում Արևելյան հայ եպիսկոպոսները թղթերով մեծ գործ են կատարում:

Հուստով պապերի համար հարժար առիթը բացվում է: Խաչակիրները, Ա. Երկիրն ազատելու համար մահմերգականների ձեռքից, Արևելք են գալիս և հայ պետերը քրիստոնյաց եղբայրներին սիրով են ընդունում քաղաքական տեսակետով, բայց քարեկամությունը վնասաբեր հետևանք է ունենում Եկեղեցու համար:

Այսպիսի ժամանակում, երբ Հայրապետական Աթոռը շրջապատված էր ներքին, քաղաքական և կրոնական արհամիրքներով, հայրապետությունը վիճակված էր Գրիգոր Գ., ներսես Շնորհալի և Գրիգոր ՏղաՊահանիներին, որոնք ո՛չ պապերին ստրկացան և ո՛չ հանաց պահանջը կատարեցին, այլ հայրենի Եկեղեցու անկախությունն ու սրբությունը ուղղափառ դավանության ամուր հիմքի վրա դրին:

Բ.

ՇՆՈՐՀԱԾՈՒ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ. ՆՈՐԱ ԵՐԵՑ ԵՂԲԱՅՐԸ ԳՐԻԳՈՐԻՅ ԿԱ-
ԹՈՂԻԿՈՍ 1113-ին. ՍՅԱԼ ԼԵՐԱՆ ԺՈՂՈՎԸ 1114-ին ԵՎ ԱՂԹԱՄԱՐԻ ԿԱԹՈՂԻ-
ԿՈՍՈՒԹՅՈՒՆԸ. ՇՆՈՐՀԱԾԻ ՎԱՐԴԱՊԵՏ., ՇՆՈՐՀԱԾԻ ԵՓԻՍԿՈՊՈՍ. ՆՈՐԱ
ԴԻՐՔԸ ԳՐԻԳՈՐԻՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ ԱՌԵՎԱԿԱՆ ԴԱՄԱՆԱԿԻ ԴՐՈՒՅԵԼՈՒ-
ԹՅՈՒՆԸ:

Ներսես Շնորհալին Պահավունի Ապի-
րատ իշխանի (Գրիգոր Բ. Վկայասերի քե-
ռողրդին) որդին էր: Երբ Կիլիկիո իշխանները
թյուրք և հույն ասպատակությունների
զորության կարողանալով դիմադրել, ամեն
մեկը քաշվեց յուր բերդը և սկսեց ամրացնել
արտաքին թշնամինների հարձակման դեմ
դնելու համար:

Ապիրատ Պահավունին էլ (Ներսես Շնոր-
հալու հայրը) այս ու այն կողմը տնօղա-
փոխությունից հետո, վերջապես հաստատ-
վեցավ Ռով բերդի մեջ, որ գտնվում է
Տէքո գավառում, Անտիոքի մոտերք, և սկսեց
ամրացնել ու հոգ տանել և շենքերով ճո-
խացնել. մի հոյակապ եկեղեցի կառուց, որ
և հետո յուր որդիները հայրապետանոցը
դարձավ 25 տարու չափ: Այստեղ ծնվեց Գրի-
գորի 1096 թվին և Ներսես՝ 1102-ին:

Հազիվ դեռ Ներսես կաթից կտրած էր,
երբ պապը՝ Գրիգոր Բ. Վկայասերը նորան
և Գրիգորին Ռով դոյակից բերել տվեց յուր
մոտ: Գրիգոր Բ. Վկայասերը մնեց հոգ տա-
րավ նորա կրթության և դաստիարակու-
թյան. և որովհետև փոքր հասակից զրկված
էին երկու եղբայրներն էլ ընտանեկան
փոխանքից և աշքերը բացած, զբաղված
տեսել էին եկեղեցական դաս, հոգեոր դաս-
տիարակություն և բարոյական կրթություն.
ուստի երկուն էլ Գրիգոր Լուսավորչի և
յուրյանց պապի՝ Գրիգոր Բ. Վկայասերի
արժմանակությունը հաջորդ եղան և Հայաստան-
յաց Ս. Եկեղեցու հաստատածիմն սյուն:
Նոյն ժամանակի ամենանշանավոր վար-
դապետի՝ Ստեփանոս Կարմիրվանեցու, որ և
«Գիտնական» մականոնն ստացավ, աշա-
կերտներն եղան: Նորա աշակերտակից էին և
երկու ուրիշ տղաք՝ իդմատիոս և Սարգիս,
որ կոչվեցավ Շնորհալի:

Վկայասերը վախճանեցավ 1105-ին, բայց
շմոռացավ Գրիգորիսին և Ներսեսին, սոցա-
իբրև կտակ ավանդեց Բարսեղ Կաթողիկո-
սին, որ սնուցանե և կրթի: Գրիգորիսը 10,
իսկ Ներսեսը 4 տարեկան էր մոտավորա-
պես, երբ Բարսեղ հայրապետի խնամքին
հանձնեց նոցա պապը:

Բարսեղ Կաթողիկոսի խնամքի տակ եր-
կուսն էլ աճում ու զարգանում էին կրոնա-
կան և բարոյական դաստիարակության
մեջ:

Հայրապետը Գրիգորիսին հինգ կամ վեց
տարուց հետո վարդապետ օծեց մոտավորա-

պես 1111-ին կամ 1112-ին, երբ նա արդեն
16-ի մեջն էր: Վարդապետ ժամանակն էլ
նորան առաջնորդում էին դեռ յուր վարժա-
պետը, կաթողիկոսը և ուրիշ անձինք: Իսկ
եղբայրը՝ Ներսես, որ եղբոր վարդապետու-
թյան ժամանակ 10 տաեկան էր, դեռ ու-
սումն էր շարունակում և հասակի փոքրու-
թյան պատճառով, Ստեփանոս վարդապե-
տին երկար աշակերտելու բախտն ունեցավ:
Միևնույն ժամանակ նորա վերա հոգալ
ակաց յուր նորընծա հղայրը Գրիգորիսիը:
Իդմատիոսն ու Սարգիսն էլ ավարտեցին ու-
սումնը: առաջինը քաշվելով զնաց Սյավ լե-
րան Շափիր անապատը, երկրորդը Քա-
րաշիթու վանքը քաշվեցավ, յուրյանց ու-
սումն արդյունավորելու:

Բարսեղ կաթողիկոսը զանազան տեղեր
այցելություն արավ յուր հոտի պետքերը
հոգալու, վերադարձն եկավ Քեսոն և այն
տէղերի վաճեքիրտան էր ապրում, և սպա-
սում էր Վարդապահ տոներին: Մտադիր էր
Վարդապահն անելուց հետո՝ ուստի զնալ
երուադիմ, և մինչդեռ Վարդակեր ավա-
նում, մի տանիքի վերա հոգելուրական դա-
սով շրջապատված ժամերգություն էր կա-
տարում, տանիքը փուլ է գալիս և վիրավոր
հայրապետը խնդրում, որ իրեն տանեն
Սյավ լեռը, ուր և կաթողիկոսական քողն ու
զավագանը հանձնելով Գրիգոր Բ. Վկայ-
սերի քեռորդի և յուր խնամքին հանձնա-
րարիած քանամյա Գրիգորիսին, պատվի-
րում է եպիսկոպոսներին, որ կաթողիկոս
ձևնադրեն նորան, և ըստ ոմանց, ինքը
ձեռնադրում է նորան եպիսկոպոս և երես-
նամյա կաթողիկոսությունից հետո, վախ-
ճանում է 1113 թվին:

Գրիգոր Պահավունին 1113-ին կաթողի-
կոս է օծվում Հավիլ 18 տարեկան հասա-
կում, Գրիգոր Գ. Պահավունի անունով:
Ինչքան էլ որ փոքր հասակում կաթողիկոս
լինելու մերձավորներին խորթ չեր քանի որ
գիտեին նորա կարն ու ուժը, բայց և այն-
պես հեռավորներից, մանավանդ Աղթամա-
րի եպիսկոպոսությունը, կամ ըստ ոմանց
եպիսկոպոտապետությունը, արհամարհա-
կան աշուկ մնարժեց Գրիգորիսի կաթողիկո-
սությունը, որովհետև ինքնապիսության ո-
գին վաղուց արդեն արմատացել էր Աղթա-
մարի եպիսկոպոսների մեջ, երբ նոքա Արծ-
րունաց թագավորության ժամանակ կա-
թողիկոսական պատիվ, թերևս կաթողիկոս

էին: Գագիկ, Արծրումյաց և Վասպուրականի թագը կապելուց հետո, կամեցավ, որ ինչպիսին ինքը քաղաքական տեր էր երկրի, ունենալ և յուր անկախ կաթողիկոսը: Գեղրդ կաթողիկոսը նորա խնդրանքով եղբորդորդում (Գագիկի) 921 թվին եպիսկոպոսակետ ձեռնարդեց Եղիա անոնմով, բայց ոչ անկախ: Այս եպիսկոպոսապետությունը շարունակում է մինչև Գեղրդ Գ. Պահակունին, երբ Աղթամարի հայիսկոպոսն էր Դավիթը: Սա, պատճառ բերելով նորընտիր հայրապետի հասակը, հարմար առփիթ է համարում այս անգամ իրավործելու իր նախորդների ձգտումը, ուստի չէ ընդունում նորան կաթողիկոս և մերժում է, դիրիքոր Գ. Պահակունին անմիջապես ժողով է գոամարտում 1114 թվին Սյավ լեռան վճրա, ուր ժողովականները նորան օրինավոր հաջորդեն հաստատում, իսկ Դավիթին յուր համախոներով նզովելով, հակաթոռ են հրոշակուած: Դավիթը հաստատում է մնում և չէ շեղում յուր դիոսավորությունից և առանձին կաթողիկոսով՝ հիմնադիր է լինում Աղթամարում, որ մինչև օրս էլ շարունակվում է:

Ժողովը շրջաբերականով անդեմքացնում է Արևելյան մյուս եպիսկոպոսներին յուր որոշումը, որոնք համակերպում են ժողովին և Դավիթին մերժելով հակաթոռ են համարում: Այս ժողովով որոշվեցավ դարձալ կաթողիկոսական ընտրության ժամանակ կարևոր նշանակություն տալ թշնա, Հաղբատի, Թաղեի և տաթեկի եպիսկոպոսին:

Գրիգոր Գ. Պահակունին յուր հարազատ եղբոր՝ Ներսեսին իրդէ հայր և եղբայր ջանք դրեց դաստիարակելու և կամաց կամաց եպիսկոպոսական բարձր աստիճանին հասցնելով, (ցանկանում էր) նորան կաթողիկոսական Աթոռին ժառանգ հասցնել: այս անում էր ո՞չ թե նորա համար, որ եղբայրն էր, այլ տեսնեցով նորա ընդունակությունը և արժանիքը: Ներսեսին 1120-ին, երբ նա մոտավորապես 18 տարեկան էր, Գրիգոր Գ. Վարդապետ ձեռնազեց: Ժողովուրդը նկատելով նորա մաքուր վարքը, ոսուրք կյանքը, քաղցր կենակցությունը, վայելով խոսքն ու շարժվածքը, բազմատեսակ և հաստատ գիտությունը և ընտիր գրիշը, նորան «Ծնորհալի» և «Երգեցող» մակդիրներով պսակեց: թե ի՞նչ կյանք է ոմնեցել Ծնորհալին մինչև վարդապետությունը՝ գրեթե անհայտ է: այսքան միայն կարելի է ասել, որ այդ շոշանը աշակերտական պետք է համարել, երբ նա դեռ ուսանում էր: Պարապմունքը, ստացած կրթությունը սոքա են՝ Աստվածաշունչ Ս. Գրիգոր, վարդապետություն և մեկնություն սուրբ հայրերի:

Սրբոց և Եկեղեցու պատմություն, Եկեղեցու կարգ ու կանոնի հմտություն, Եկեղեցական երաժշտություն, շարադրություն արձակ կամ ոտանավոր և սոցա նմանները, որոնք ժամանակի անհրաժեշտ գիտություններն են. միենուկն ժամանակ ընտիր հայկաբանություն էր յուրացրել: Այս բոլորի մեջ Ծնորհալին կատարյալ հմտություն էր ստացել և յուր ձիրքն ու շնորհքը բազմահարարուատ հանճարով զարդացան և «Ծնորհալի» անվան հասցրին, իսկ նորա ուսման վայրը Ստեփանոս Գիտնականի՝ վարժապետի կացարանը պետք է կարծել, այն է Կարմիր վանքը, կամ նորա շրջակա և մերձական անապատներից մեկը:

Որոշակի հայտնի չէ Ծնորհալու եպիսկոպոսության տարին. ոմանք կարծում են թե նա եպիսկոպոս եղած ժամանակը 30 տարեկան վկիններ, իսկ ոմանք, թե 20-ից շատ շանցած: Վերջինս գուց ավելի հավանական լինի, որովհետև նա չէր հոժարում եպիսկոպոս լինել փոքր հասակում: Մանավանդ փուլս էր տալի այն բանից, ոչ վկինի թե ժողովրդի մեջ տարածվելի թե ինքը Գրիգոր Գ. ի եղբայր լինելովն է հասնում: եպիսկոպոսական աստիճանին, բայց ընդհակառակը ժողովուրդը սիրում և հարգում էր և բոլորն էլ արժանի համարելով նորան այդ աստիճանին, դեռ սպասում էին որ կաթողիկոս ևս կինի: Վերջապես նա զիշավ և եպիսկոպոս ձեռնադրվեց: յուր եղբորից: Երբեք եպիսկոպոս առնեցել է և մի թեմ. ուրա մասին յուր ատենաբանառության մեջ հիշում է. «Ո՞չ ի տեսչութեանն սակաւուն հօտի արդուցի զգուրն հանգստեան»:

Այսուհետև երկու եղբայրներն ի միասին ձեռք ձեռքու տված, մեծ եռանդով աշխատում են Եկեղեցու և ազգի բարեգարդության համար: Կաթողիկոսին վերաբերյալ գործերը Գրիգոր Գ. անմիջապես էր կատարում, իսկ մյուսները գրեթե Ծնորհալու ձեռքից էին անց կենուա: Երկուն էլ համերաշխ էին գործուած: Ծնորհալու հսկողության տակ էին ոչ միայն ներքին կառավարությունը, հայրաեպետանոցի հոգսերը, այլ և բոլոր գրվածքները, նամակները, պատգամավորությունները, թեպետ ինքը ոչ աթոռակալ և ոչ փոխանորդ էր հայրապետի, ամեն ինչ տեղն ու տեղը ըստ արժանվուկն լրացնում էր:

Սոքա բոլորն էլ ատպագա կաթողիկոսության տատապկոտ ասպարեզի մեջ արի դուրս գալու մի տեսակ փորձություն էին: Հիրավի ցուց տվեց այդ փորձերի բոլոր եփած Ներսես Ծնորհալին իր կաթողիկոսության ժամանակ, որ փորձերը, եղբոր խնամքը զուր չէին անցել նորա համար: (Շարունակելի)